ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 28 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ Է/40/190-26 առ «30» 01 2026թ.

«Սորելլի» ՍՊԸ
տնօրեն
Տ. Սիրեկանյանին

(№ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-84/25-01/239 պայմանագիրը միակողմանի լուծման մասին)

Հարգելի՛ պարոն Սիրեկանյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-84/25» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Սորելլի» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի սեպտեմբերի 1-ին կնքվել է № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-84/25-01/239 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված «պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում», սակայն մինչ օրս Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանքները Ձեր կողմից մատակարարված չեն:

Հաշվի առնելով Պայմանագրի դրույթները՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Սորելլի» ՍՊԸ-ի միջև 2025թ. սեպտեմբերի 1-ին կնքված № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-84/25-01/239 պայմանագիրը և առաջարկում եմ 5 աշխատանքային օրվա ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (188 000 ՀՀ դրամ) և որակավորման (282 000 ՀՀ դրամ) ապահովումները:

Հարգանքով՝

ԳՏՏ - ԸՀՏ Ս. Մաթևոսյան

Կատ.
ԳԸԲ գլխավոր մասնագետ –
խմբի ղեկավար
Հռիփսիմե Ռամազյան
Հեռ. 010-20-04-91